

## Հայ բուսաբանները

Եղոյան Ռաֆիկ

*Հանգուցային բաներ. բույսեր, գիտնական, տեսակային բազմազանություն, բուսական ռեսուրսներ*

Հայաստանում հարուստ և բազմազան բուսականությունը, որը ունի հին ծագում, հետաքրքրել է ինչպես հայ այնպես էլ աշխարհի բուսաբաններին: Հայաստանի ֆլորայի վերաբերյալ արդյունավետ հետազոտություններ են կատարել Տուրնիֆորը, Ն. Խ. Բակոմբամբ, Դ. Բ. Սոսնովսկին, Մ. Վազները, Գ. Բ. Ռադիեն, Ե. Ս. Բուշը, Ա. Ա. Հրոսեյանը, Ն. Ա. Տրոիցկին, Ս. Տ. Տատամշը, Օ. Մ. Զեդեմեյերը, Պ. Պ. Յառոշենկով, Ն. Բ. Վավիլովը, Մ. Ֆ. Ժուկովսկին և ուրիշներ:

Արտերկրի բուսաբանների աշխատանքները շարունակել, լրացրել և հարստացրել են հայ բուսաբանները: Առաջին հայ բուսաբան Ա. Ա. Քալանթարը 1888թ. ուսումնասիրել է Արարատ լեռան հարակից մարգագետինները և տվել դրանց բուսակազմը ու արդյունավետ զարգացման ուղիները: Բուսաբանության վերաբերյալ հիմնարար ուսումնասիրությունները Հայաստանում հիմնականում պայմանավորված է Ա. Լ. Թախթաջյանի գիտական գործունեության հետ, որպես աշխարհահռչակ բուսաբան: Նա հնէաբանության, ֆլորայի կարգաբանության, էվոլյուցիայի և շատ հարցերի հիմնադիրն է աշխարհում: Նա 400-ից ավել աշխատանքների, այդ թվում 20 մենագրության հեղինակ է, որոնք հրատարակվել են աշխարհի տարբեր լեզուներով: Թախթաջյանի խմբագրությամբ հրատարակվել են ԽՍՀՄ-ի «Կարմիր գիրքը» Հայաստանի և Երևանի ֆլորաները:

Ա. Լ. Թախթաջյանը XX դարի մեծագույն բուսաբաններից է և նշանակալի դեր ունի Հայաստանում և Ռուսաստանի դաշնությունում բուսաբանական գիտության մի շարք ճյուղերի զարգացման ու կայացման ուղղությամբ, այդ թվում բուսաբան կադրերի պատրաստման գործում: Նա իրականում հանդիսանում է բարձրակարգ բույսերի ֆիլոզենեզի աշխարհի խոշորագույն մասնագետը: Եղել է արտերկրների մի շարք ակադեմիաների անդամ: Մեծ աշխատանք է կատարել բուսաբանական գիտության պրոպագանդման ուղղությամբ, եղել է «Ботанический журнал» ամսագրի գլխավոր խմբագիր (ԽՍՀՄ): Ա. Վ. Թախթաջյանը արժանացել է ՀՀՄՀ գիտության վաստակավոր գործչի (1967), սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչումների (ԽՍՀՄ), պետական մրցանակի (1981), պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (1975) «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, բազմաթիվ մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1947):

Նա Հայաստանում ստեղծել է իր դպրոցը: Նրան աշակերտել են Հայաստանի բուսաբանների մեծ մասը: Նա ընտրվել է միջազգային բուսաբանական ընկերության նախագահ:

Միջազգային բուսաբանների մեջ իր ուրույն տեղն ունի Միքայել Քրիստափորի Զայլախյանը: Զայլախյանի գիտական աշխատանքները հիմնականում վե-

րաբերում են բույսերի աճման ու զարգացման հարցերին, օնտոգենեզի ընդհանուր օրինաչափությունների մշակմանը, գեներատիվ զարգացմանն ու ծաղկման հորմոնային տեսության հիմնադիրն է: Այդ տեսությունը համաշխարհային ճանաչում է բերել Չայլախյանին: Չայլախյանը հանգել է այն եզրակացության, որ բույսերի ծաղկման լուսապարբերական կարգավորումն իրականանում է հորմոնային գործոնների օգնությամբ, որոնց անվանել է ֆլորիգեն: Չայլախյանը բացահայտել է, որ ֆլորիգենը հորմոնային կոմպլեքս է, կազմված 2 բաղադրիչներից՝ գիբերելիններից և ինհիբիտորներից: Գիբերելինների անբավարարությունը սահմանափակում է երկարօրյա բույսերի զարգացումը կարճ օրվա պայմաններում, իսկ անտեգինների պակասը դանդաղեցնում է կարճօրյա բույսերի զարգացումը: Նախկին ԽՍՀՄ ֆիզիոլոգիայի ինստիտուտում ստեղծեց արհեստական կլիմայական կամերաներ, որտեղ մեծ ճշտությամբ կարգավորում էր ջերմության, խոնավության, ցերեկվա տևողության խնդիրները, և ընտրելով այդ բաղադրիչների բազմաբնույթ տարբերակներ՝ այդ պայմաններում ուսումնասիրվում էին բույսերում տեղի ունեցող ֆիզիոլոգիական գործընթացները: Նա առաջարկեց արտադրությունում կիրառել աճման խթանիչներ՝ որպես այդպիսին առաջարկելով հիբերիլինի թույլ լուծույթ: Նա արժանացել է բարձր պարգևների, մրցանակների, եղել է մի շարք երկրների ակադեմիկոսների անդամ, մեծ աշխատանք է կատարել բուսաբանական գիտության պրոպագանդման ուղղությամբ:

Հիմք ընդունելով այդ ուսումնասիրությունների արդյունքները Հայաստանի բուսաբանական գիտության մեջ այդ թվում նաև կադրերի պատրաստման առումով մեծ ներդրում ունի Վ. Հ. Ղազարյանը:

Վ. Հ. Ղազարյանը գիտահետազոտական աշխատանքներն սկսել է 1940թ.: ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի շուրջ 40 ամյա (1948-1988թթ.) տնօրենության ժամանակ ակադեմիկոս Վ. Հ. Ղազարյանի ղեկավարությամբ տեսական արժեքավոր հետազոտություններ են իրականացվել բարձրակարգ բույսերի ծերացման ֆիզիոլոգիական բնույթի պարզաբանման ուղղությամբ: Բույսերի հիմնական կենսաձևերի ֆիզիոլոգիկենսաբանաքիմիական առանձնահատկությունների և արմատատերևային ֆունկցիոնալ կապի ինտեգրման մակարդակի մեկնաբանության հիման վրա զարգացրել է բարձրակարգ բույսերի ծերացման տեսություն: Ըստ Վ. Հ. Ղազարյանի ծածկասերմ բույսերի պատմական զարգացման ընթացքում ծառերից դեպի խոտաբույսերը օրգանիզմների ֆիզիոլոգիական վերադասավորումը ուղղված է դեպի կենսական գործընթացների ակտիվացում և կապված է արմատատերևային հեռավորության կրճատման, ինչպես նաև տերևների արմատապահովության բարձրացման հետ: Վ. Հ. Ղազարյանը պարզել է, որ բույսերի երկարամյաության բնույթը պայմանավորված է զագաթնային բողբոջների դոմինանտ վիճակով: Նա կորելացիոն կապ է հայտնաբերել ցողունի ֆլոեմայի և քլորոֆիլակիթ ֆելոդերմի միջև, նկարագրել է բարձրակարգ բույսերի անհատական զարգացման գլխավոր և երկրորդական հակասական ու միասնական գործընթացների զարգացումը և այն դիտարկել որպես օնտոգենեզի բնորոշ գլխավոր հակասությունների հերթափոխման գործընթաց: Վ. Հ. Ղազարյանի նախաձեռնու-

թյամբ ու ղեկավարությամբ մշակվել են Հայաստանի անտառապատման և կանաչապատման գիտական հիմունքները: Ակադեմիկոս Վ. Հ. Ղազարյանի գրչին են պատկանում 7 մենագրություն, ավելի քան 300 գիտական հոդվածներ: Վ. Հ. Ղազարյանը եղել է Հայաստանի և արտերկրի մի շարք բուսաբանական ընկերությունների անդամ:

Հայտնի բուսաբաններից է Է. Ց. Գաբրիելյանը: Նա լուրջ հետազոտական աշխատանք է կատարել բույսերի կարգաբանության, էվոլյուցիայի, աշխարհագրության, ձևաբանության և բույսերի պահպանման ուղղությամբ: Նրա ղեկավարությամբ հայտնաբերվել են Հայաստանի բուսաշխարհի 12 էնդեմիկ տեսակներ, որոնք անվանվել են Գաբրիելյանի անվամբ: Նա երկար ժամանակ ղեկավարել է բուսաբանության ինստիտուտի կարգաբանության և աշխարհագրության բաժինները: Արժանացել է բազմաթիվ մրցանակների, (Կամարովի, Ֆետոթովի) պարգևների (XII, XIV միջազգային բուսաբանական վեհաժողովների արծաթե մեդալների): Մեծ լուրմա ունի Հայաստանում բույսերի կարգաբանության բնագավառում կադրերի պատրաստման ուղղությամբ:

Պ. Ա. Խուրշուդյանը երկար տարներ ղեկավարել է բուսաբանության ինստիտուտի անտառային բաժին: Նրա ղեկավարությամբ հետազոտական աշխատանք են կատարվել Հայաստանում անտառների մոնիթորինգի, կադաստրի, անտառային համակեցությունների քարտեզագրման, զարգացման դինամիկայի, վերականգնման, առանձին ծառատեսակների պահպանման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ և այլն:

Հայաստանի բուսաբաններից մեծ ավանդ ունի Գ. Մ. Ֆայվուշը: Նրա հիմնական գիտական գործունեությունը կապված է բույսերի աշխարհագրության և երկրաբուսաբանության խնդիրների հետ: Ֆայվուշը ղեկավարել և կատարել է տարբեր բնապահպանական ծրագրեր: Մասնակի մասնակցություն է ունեցել կենսաբազմազանության 5-րդ ազգային զեկույցների ստեղծմանը: Նա ՀՀ Կարմիր գրքի համահեղինակ և խմբագիրներից մեկն է, հոդերի չեզոք դեգրատացիայի ծրագրի միջազգային փորձագետ, Հայաստանում ստեղծվող «Էմերալտ» էկոլոգիական ցանցի ԵԽ ծրագրի գիտական խմբի ղեկավարն է, մասնակցել է Կովկասի էնդեմիկ բույսերի պոպուլյացիաների վիճակի գնահատման ծրագրին, Հայաստանի հատուկ պահպանվող տարածքների բույսերի բազմազանության գնահատման Հայաստանի ինվազիվ բույսերի ուսումնասիրության խմբի ղեկավարն է և շարունակում է Հայաստանի հազվագյուտ և անհետացող տեսակների տեղախմբերի վիճակի ուսումնասիրությունները: Գ.Մ. Ֆայվուշի աշխատանքները հիմնականում ունեն բնապահպանական բնույթ:

Բուսաբանության մեջ որոշակի գիտական վաստակ ունի Գ. Հ. Օզանեզովան, Նրա հետազոտությունները նվիրված են եղել ծաղկավոր բույսերի էվոլյուցիային, դրանց կարգաբանությանը: Նա հիմք դրեց համեմատական ձևաբանությանը և անատոմիային: Ուշադրության են արժանի նաև բույսերի ադապտացիայի և էկոլոգիայի թեքումով աշխատանքները: Հայկական բուսաբանական ընկերության (ՀԲԸ) փոխնախագահն է, ռուսական բուսաբանական ընկերության անդամ:

Հայաստանում Թախտաջյանի աշակերտն է Յա. Ի. Մուլքիջանյանը, որը աշխատել է Բուսաբանական ինստիտուտի տնօրեն, Բնապահպանական դասախոսական գործունեության հետ միասին նա զբաղվել է նաև քաղաքների կանաչապատման մեթոդների կատարելագործման հարցերով:

Վ. Ե. Ավետիսյանը, ղեկավարելով բուսաբանության ինստիտուտի բույսերի կարգաբանության աշխատանքային բաժինը, ակտիվ մասնակցություն է ցուցաբերել «Флора Армении» т. 4-10. (Ереван, 2002г.) և., Жизнь растений, т. 5, (Москва, 1981г) բազմահատորյակների կազմման գործում: Զբաղվել է բարձրակարգ բույսերի կարգաբանության բազմաթիվ խնդիրներով: 1974-1989թթ. ղեկավարել է Բուսաբանության ինստիտուտի բարձրակարգ բույսերի սիստեմատիկայի և աշխարհագրության բաժինը:

Մյուս բուսաբաններից Ա. Մ. Բարսեղյանը գլխավորել է Բուսաբանության ինստիտուտի երկրաբուսաբանության բաժինը: Նրա բոլոր հետազոտությունները վերաբերում են Հայաստանի բուսականությանը: Ուսումնասիրել է ջրաճահճային բուսականությունը: Ա. Բարսեղյանը հետազոտել և քարտեզագել է բուսականության բազմաթիվ տեսակներ: Հրատարակել է 200 ավել գիտական աշխատանքներ «Հայաստանի Կարմիր գրքի» (1990) ստեղծման համահեղինակներից է, կազմել է հանրապետության տարբեր շրջանների բուսականության քարտեզներ: 30 տարուց ավել եղել է «Հայաստանի բնություն» գիտամատչելի ամսագրի գլխավոր խմբագիրը: Դասախոսել է Երևանի Պետական, «Հրաչյա Աճառյան» համալսարաններում և Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում:

Բուսաբանների մեջ իր ուրույն տեղն ունի Է. Ս. Նազարովան: Ա. Լ. Թախթաջանի առաջարկով Է. Ա. Նազարովան կարիտոլոգիական խոր ուսումնասիրություն է տարել (*Compositae, Lactuceae*) *Crepis* ցեղի հայկական ներկայացուցիչների վերաբերյալ հիմք դրել կարիտոսիստեմատիկային: Կարիտոլոգիական տվյալների հիման վրա նկարագրել է գիտության համար երկու նոր ցեղերը՝ *Lactucella Nazarova, Takhtajiantha Nazarova* և երկու տեսակներ՝ *Sonchus araraticus Nazarova & Barsegian, Scorzonera gorovanica Nazarova*. տեսակների վերաբերյալ:

Ա. Պ. Մելիքյանը Ա. Լ. Թախթաջյանի ղեկավարությամբ ուսումնասիրել է ջրաշուշանագիների (*Nymphaeaceae*) ընտանիքի բույսերը: ԵՊՀ-ում դասավանդել է, «Բարձրակարգ բույսերի սիստեմատիկա», «Բարձրակարգ բույսերի համեմատական անատոմիա» և այլ դասընթացները: 1977թ. տեղափոխվում է Մոսկվա և ՄՊՀ վարում «Ընդհանուր կենսաբանություն դասընթացը»: Խոր հետազոտություններ է կատարել ծաղկավոր բույսերի կարպոլոգիայի բնագավառում:

Վ. Ա. Մանաքյանը զբաղվել է մամուռների ուսումնասիրությամբ: Հետազոտել է Հայաստանի բրիոֆլորան: Վ. Ա. Մանաքյանի կողմից ստեղծած մամուռների հավաքածուն հարստացրեց ՀՍՍՀ ԳԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումը: Բացի մամուռներից, Վ.Ա. Մանաքյանը ուսումնասիրել է Հայաստանի և նրա սահմաններից դուրս տարածված բարձրակարգ բույսերը հարստացրել է հերբարիումը:

Ն. Ս. Խանջյանը զբաղվել է Մարմարիկ գետի ավազանի և Դիլիջանի արգելո-

ցի ֆլորաների ուսումնասիրմամբ: Նա զբաղվել է Հայաստանի հատուկ պահպանվող տարածքներով: Այդ թեմայով հրատարակել է մի շարք աշխատանքներ:

Կ. Գ. Թամանյանի գիտական աշխատանքը կապված է բարձրակարգ բույսերի սիստեմատիկայի *Asparagus* ցեղի հետ: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Հայաստանի «Կարմիր գիրքը» կազմելու գործում (1990թ.): Կ. Թամանյանը հայտնաբերել է գիտության համար երկու նոր բուսատեսակներ *Cousinia* ցեղից: Նրա պատվին Մ. Աղաբաբյանը նոր բուսատեսակը անվանել է նրա անունով *Centaurea tamaniani*:

Ե. Մ. Ավետիսյանի հետազոտությունները վերաբերում են ռեզինալ ֆլորայի փոշեհատիկների ձևաբանության հետազոտություններին: Հերբարիումային նյութի հիման վրա, ստեղծել է փոշեհատիկների պատրաստուկների հավաքածուն: Ուսումնասիրել է *Campanulaceae* և այլ ընտանիքների ներկայացուցիչների ծաղիկների ծաղկափոշին: 70-ական թվականների վերջում նրա առաջարկությամբ սկսվեցին աշխատանքներ, որոնք նվիրված են եղել «Հայաստանի ծառերի և թփերի ծաղկափոշին» ատլասի կազմմանը:

Հայաստանի բուսաբանների մեջ իր ուրույն տեղն ունի Ա. Ա. Բալոյանը, որը բացահայտել է Հայաստանի ալպիական գոտու բուսականության առանձնահատկությունները, նրա աշխատանքները ունեն բնապահպանական բնույթ, ուշադրության է արժանի նրա կողմից հրատարակված «Բնապահպանական նշանակության և բնապահպանական բացատրական բառարանը»:

Ա. Ա. Ղուլիջանյանը աշխատելով արտադրությունում (Տավուշի մարզի Նոյեմբերյանի անտառնոտեսություն) լուրջ հետազոտական աշխատանք է կատարել Հյուսիսային Հայաստանում անտառների վերականգնման, առանձին ծառատեսակների պահպանման, արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Բուսաբանական բնույթի որոշակի ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ ԳԱԱ Գ. Մ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի ինստիտուտում գ.գ.դ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մ. Խ. Մայրապետյանի կողմից: Նա բացահայտել է հիդրոպոնիկայի եղանակով աճեցվող մի շարք բույսերում ֆիզիոլոգիական գործընթացների առանձնահատկությունները պայմանավորված բույսերի սննդարար հեղուկների քիմիական բաղադրությամբ և խտությամբ, ինչպես նաև այդ գործընթացում բույսերի արմատային համակարգերի սուբստրատների ազդեցության ֆիզիոլոգիական խնդիրները:

Բուսաբան Կադրերի պատրաստման և բուսաբանական ուսումնասիրությունների առումով թեմաների բազմազանությամբ, արդիականությամբ և խորությամբ մեծ ներդրում ունեն հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները, այդ թվում Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) բուսաբանության ամբիոնը:

ԵՊՀ բնագիտության ֆակուլտետում 1923թ. ձևավորվել է բուսաբանության ամբիոնը, որը ղեկավարել է Հ. Լ. Բեդեյանը: Նրա ջանքերով համալսարանում ներդրվում է բուսաբանական հետազոտությունների հիմքերը, մասնավորապես բույսերի ֆիզիոլոգիայի և անատոմիայի վերաբերյալ: 1927թ. բուսաբանության

ամբիոնը բաժանվում է 2 ամբիոնների՝ ձևաբանության և սիստեմատիկայի, որի վարիչը եղել է Ա. Տրոիցկիին, և երկրորդը՝ բույսերի ֆիզիոլոգիայի ու անատոմիայի ամբիոն, որը ղեկավարել էր պրոֆ. Հ. Լ. Բեդեյանը:

1938թ. բույսերի ձևաբանության և կարգաբանության ամբիոնը գլխավորել է Ա. Լ. Թախթաջյանը: Այդ տարիներին նա ստեղծել է բարձրակարգ բույսերի օրիգինալ համակարգ, որը նրան բերել է միջազգային ճանաչում: Այդ ժամանակվա նրա գիտական արժեքավոր ներդրումներից են ծածկասերմերի ձևաբանական էվոլյուցիայի, բարձրակարգ բույսերի օնոտոգենեզի և ֆիլոգենիայի հետազոտությունների արդյունքները:

1949-1972թթ. բույսերի ձևաբանության և սիստեմատիկայի ամբիոնը ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Դ. Ն. Տետերնինիկովա Բաբայանը: Ամբիոնում ստորակարգ բույսերի հատկապես ֆիտոպաթոգեն սնկերի հետ կապված ուսումնասիրություններն ընդլայնվեցին նրա գործունեության շնորհիվ:

Բարձրակարգ բույսերի ամբիոնը 1968թ. ղեկավարել է դոցենտ Թամարա Ծատուրյանը: Նա մեծ ներդրում ունեցավ մակաբույծ ծաղկավոր բույսերի ուսումնասիրության ոլորտում և մինչ այժմ հանրապետությունում ծաղկավոր մակաբույծների ամենահարուստ հավաքածուն պահպանվում է ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հերբարիումում:

1971թ. մինչև 2005թ. ստորակարգ բույսերի ամբիոնի վարիչ է աշխատել կ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ. Լ. Օսիպյանը, որի օրոք Բարձրակարգ և ստորակարգ բույսերի ամբիոնները միավորվեցին և ստեղծվեց բուսաբանության և սնկաբանության ամբիոն: Շուրջ 35 տարի նա զբաղվել է սնկերի կենսաբանականության ուսումնասիրությամբ: Նա Հայաստանում հիմնադրել է փորձարարական սնկաբանության ուղղությունը: Գիտական հետազոտությունները վերաբերել են սնկերի կարգաբանության, ֆլորիստիկայի, էկոլոգիայի, ֆիլոգենիայի, կենսացենոլոգիայի և ֆիզիոլոգիական ակտիվության հարցերին: Նախկին ԽՍՀՄ-ում առաջիններից էր Լ. Լ. Օսիպյանի սննդամթերքների միկոտոքսիկոլոգիայի վերաբերյալ աշխատանքները: Նա հետազոտություններն իրականացրել է սնկաբանության տարբեր ուղղություններով՝ ֆիտոպաթոլոգիական, բժշկական, անասնաբուժական, ջրային, հողային, տարբեր ծագման նյութերի սնկային քայքայման, սննդամթերքների սնկային անվտանգության ուսումնասիրման առումով: Նա առաջինն էր, որ սկիզբ դրեց մարդու և բնության համար գենետիկորեն մոդիֆիկացրած բույսերից ստացված սննդամթերքների հնարավոր վտանգների մասին քննարկումներին: Ակադեմիկոս Լ. Լ. Օսիպյանն առաջավոր գիտնական է, գիտության կազմակերպիչ, հասարակական ակտիվ գործիչ, շնորհալի մանկավարժ: Նրա գործունեության վաստակներից է նաև Հայաստանի բազմաթիվ սնկաբան գիտնականների պատրաստումը: Կենսաբանության ֆակուլտետի ներկայիս աշխատողների մի ստվար մասը նրա նախկին ուսանողներն են, որոնք հաջողությամբ շարունակում են իրենց մանկավարժի շնորհալի գործը:

Հայաստանի հայտնի բուսաբանների շարքում իր տեղն ունի Ս. Գ. Նանագույանը, որը 2005թ. ղեկավարում է ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության

ամբիոնը: Նա երկար ժամանակ աշխատելով ամբիոնի վարիչ իր լուսան ունի բուսաբանության դասավանդման մեջ: Նրա գիտահետազոտական աշխատանքները վերաբերում են հիմնականում սնկաբանությանը, որտեղ արժեքավոր են և գիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում սնկերի կենսաբազմաձևության խնդիրների բացահայտումը: Գիտական հետաքրքրության են ներկայացնում նրա կենսատեխնոլոգիայի և էկոլոգիայի ուսումնասիրությունների արդյունքները, արդիական են բժշկական սնկաբանության մասին աշխատանքները: Նա ուսումնասիրել է Հայաստանի սնկային մի շարք հիվանդություններ (Ժանգեր), ստեղծել սնկերի մեծ հավաքածու: Ակտիվ հասարակական աշխատող է մի շարք բուսաբան-էկոլոգիական կազմակերպությունների անդամ: Ղեկավարել է թեկնածուական և դոկտորական թեզեր, մասնակցել բուհական գրքերի գրախոսմանը և ստեղծմանը: Ս. Գ. Նանագույանը հանդիսանում է «Մսկերի պահպանության Եվրոպական խորհրդի» և «Եվրոպական սնկաբանության ասոցիացիայի» հիմնադիր անդամ, հայկական սնկաբանության ընկերության հիմնադիր, Հայաստանի «Բիոդիվա» բնապահպանական հասարակական կազմակերպության նախագահ:

Ձ. Ն. Աբրահամյանը աշխատել է ԵՊՀ բուսաբանության ամբիոնում: Նրա գիտական ուսումնասիրությունները վերաբերվել են սնկաբանությանը, մասնավորապես հողային մանրէագիտական սնկերի կենսաբազմաձևության և էկոլոգիայի հարցերին: Ուսումնասիրել է հողի միկրոբիոտայի քանակական և որակական կազմի դինամիկան՝ կախված տեխնածին ծանրաբեռնվածության աստիճանից և բնույթից: Հետազոտել է որոշ մշակաբույսերի արմատային ոլորտի էկոտրոֆ սնկերի խմբերը և դրանց ազդեցությունն այդ բույսերի աճման ու զարգացման վրա, հիվանդությունների հարուցիչներից բույսերի պաշտպանության նպատակով սինթետիկ պոլիմերային կոմպոզիցիաների կիրառման նպատակահարմարությունը և դրանց կենսաբանական օգտակարության հնարավորությունը հողի աղտոտումը կանխարգելու համար: Կատարել է գրադարանների գրքերի, ձեռագրերի, փաստաթղթերի սնկերով վարակվածության հետազոտություններ և մշակել դրանց դեմ պայքարի արդյունավետ միջոցներ:

ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության ամբիոնում այսօր էլ աշխատում են հանրապետությունում հայտնի շատ բուսաբաններ:

Հայկական պետական մանկավարժական համալսարանում բուսաբանության ամբիոնը ստեղծվել է 1942թ., որի առաջին վարիչը եղել է կ.գ.թ., դոցենտ Ս. Գ. Նարինյանը: Այդ ամբիոնի վարիչ են աշխատել ակնավոր բուսաբաններ Վ. Շ. Աղաբաբյանը Լ. Վ. Հարությունյանը, Տ. Վ. Թանգամյանը 2017թ., Ա. Ն. Զիրոյանը:

Հայ բուսաբանների շարքում իր ուրույն տեղն ունի Լ. Վ. Հարությունյանը: Նրա գիտական հետազոտությունները նվիրված են եղել ֆիտոթերապիային, բույսերի կարգաբանությանը, բնապահպանությանը և բուսակազմի հարստացմանը: Նա որոշակի աշխատանք է կատարել բնակավայրերի, հատկապես Երևանի, կանաչապատման ուղղությամբ: Համարվում է Հայաստանում սիրողական բուսաբանության հիմնադիրներից մեկը: Ուշադրության է արժանի նրա «Ճանապարհորդություն դեպի բնության թաքնված վայրերը, Հայաստանի բնությունը և նրա պահ-

պանման հարցերը» աշխատանքները: Հրատարակել է «Այգեպանների հանրագիտարան»: Նա նպաստել է երիտասարդության մեջ բնապահպանական խնդիրների ձևավորմանը: Որոշակի աշխատանք է կատարել կանաչապատման և լանդշաֆտային ճարտարապետության ուղղությամբ, բարձր գնահատելով կանաչաշինարարական աշխատանքները: Բուսաբանական գիտության պրոպագանդելը եղել է նրա կարևոր ներդրումներից:

Հատկանշական է, որ այդ ամբիոնում կատարվել են նաև սելեկցիոն աշխատանքներ: Ստացվել են եգիպտացորենի «Աբովյան – 1», «Աբովյան – 2» հիբրիդները (Տ. Մ. Տեր-Սահակյան): Վ. Շ. Աղաբաբյանը բացահայտել է վայրի սննդային բույսերի կենսաբանական առանձնահատկությունները, նա զբաղվել է բույսերի հնէաբուսաբանությամբ: Վ. Աղաբաբյանը երկար ժամանակ աշխատելով բուսաբանության ամբիոնի վարիչ մեծ ներդրում ունի կենսաբանական ուսումնասիրությունների պատմության գործում:

Բուսաբանության գծով որոշակի աշխատանք է կատարել պրոֆեսոր Տ. Վ. Թանգամյանը, հատկապես բույսերի ֆիզիոլոգիայի բուսաբանության դասավանդման մեթոդիկայի և դպրոցական դասագրքերի ստեղծման ուղղությամբ: Նա շուրջ 12 դպրոցական դասագրքերի, մեթոդական ցուցումների հեղինակ է: Նրա գիտահետազոտական հիմնական ուղղությունը նվիրված է եղել բույսերի աճի զարգացման և ծերացման հիմնախնդիրներին:

Բուսաբանության բնագավառում մեծ աշխատանք է կատարել Ա. Ն. Զիրոյանը: Աշխատել է ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտում բույսերի էկոլոգիայի բաժնի վարիչ, փոխտնօրեն, տնօրեն՝ 2000-2002թթ.: ՀՀ բնապահպանության փոխնախարար, ապա կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ, ԵՊՄՀ-ի կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Նա առաջինն է տվել ՀՀ բուսական պաշարների էներգետիկական գնահատականը և կազմել բուսածածկի կենսաարտադրողականության և երկրաբուսաբանական քարտեզները:

Մշակել է կենսաբազմազանության հզորությունների գնահատման և կենսաբանական վերափոխված օրգանիզմների կառավարման, ինչպես նաև Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրեր: Նա գիտության կազմակերպիչ է և հասարակական ակտիվ աշխատող:

Հայաստանի Ազգային Ագրարային համալսարանում բուսաբանության ամբիոնը կազմավորվել է 1930թ.: Ամբիոնի առաջին վարիչն է եղել Ն. Ա. Տրոխցկին: Ամբիոնի վարիչներ են աշխատել դոցենտ Ա. Գ. Արարատյանը, պրոֆեսոր՝ Հ. Լ. Բեդեյանը, Ե.Ս. Ղազարյանը, Հ. Կ. Փանոսյանը, Վ. Ս. Բաղայանը, Պ.Ա. Ղանդիլյանը: Այստեղ բուսաբանության վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքներ են ծավալվել Հայաստանի ֆլորայի, բույսերի բջջաբանության, չորադիմացկունության, մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների պահպանման և ընտրասերման ուղղությամբ: Վ. Ս. Բաղայանը ուսումնասիրել է բույսերի հերձանցքային ապարատի առանձնահատկությունները կապված բույսերի չորադիմաց



կունություն հետ:

Պ. Ա. Ղանդիլյանը զբաղվել է հացաբույսերի վայրի նախնիների ուսումնասիրությամբ, նրանց աշխարհագրությամբ և պահպանման խնդիրներով: Նրա և Վ. Ա. Ավագյանի ջանքերով Ջրվեժում ստեղծվեց աշխարհում նմանը չունեցող հացաբույսերի վայրի նախնիների պահպանման «Էրեբունի» արգելոցը: Պ. Ղանդիլյանը ՀԱԱՀ բուսաբանության ամբիոնում ստեղծեց հացաբույսերի վայրի նախնիների գենոֆոնդի պահպանման պրոբլեմատիկ լաբորատորիա: ՀԱԱՀ-ում որոշակի աշխատանք է կատարվել մոլախոտային հարյուրավոր բույսերի բուսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ (ակադեմիկոս Գ. Խ. Աղաջանյան): Ուշադրության է արժանի պրոֆեսոր Ա. Շ. Մելիքյանի հետազոտությունները վայրի բանջարային որոշ բույսերի բուսաբանական, կենսաբանական ուսումնասիրությունները, որտեղ տրված են նաև նրանց պահպանման ու էկոլոգիական որոշ խնդիրների լուծման ուղիները: Ժ. Հ. Վարդանյանը աշխատել է այդ համալսարանի անտառագիտության ամբիոնի վարիչ և նպաստել է անտառագիտության որոշ խնդիրների բացահայտմանը, տվել նրանց լուծումները:

Վանաձորի Հով. Թումանյանի անվան պետական համալսարանում (նախկին մանկավարժական ինստիտուտ) բուսաբանության ամբիոնը ստեղծվել է 1973թ., որի առաջին վարիչն է եղել դոցենտ Կ. Հ. Կարապետյանը: Այս ամբիոնը ղեկավարել են հոդվածի հեղինակը, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Վ. Ապրիկյանը, կ.գ.դ., պրոֆեսոր Զ. Ս. Վարդանյանը:

Ռ.Հ. Եղոյանը զբաղվել է վայրի օգտակար բույսերի ռեսուրսագիտության և դրանց պահպանման խնդիրներով, տվել է Լոռու մարզի հիմնական բուսական էկոհամակարգերի կենսաէկոլոգիական համակարգերի գնահատականը, հյուսիսային Հայաստանի ենթալպյան բարձրախոտերի էկոլոգո-ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները: Նա զբաղվել է վայրի բանջարային բույսերի աշխարհագրության, ռացիոնալ օգտագործման, հումքի անվտանգության խնդիրներով: Նրա ղեկավարությամբ կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է նաև Փամբակ գետում և նրա առանձին վտակներում այգոցենոզի վիճակը և նրա քանակական խնդիրները՝ կապված գետերի ջրերի քիմիական աղտոտման, տարվա եղանակների և այլ խնդիրների հետ: Ռ. Հ. Եղոյանը հետաքրքիր աշխատանքներ է կատարել բույսերի էկոլոգիայի և կայուն զարգացման վերաբերյալ: Ամբիոնում որոշակի աշխատանք է կատարվել Լոռվա սարահարթի ջրահավաք ավազանի և նրանց պահպանման վերաբերյալ: Որոշակի գիտական արժեք ունեն Դեբեդ գետի հովտի վայրի պտղատու թփատեսակների կենսա-էկոլոգիական առանձնահատկությունների բացահայտումը տարբեր միկրոկլիմայական պայմաններում:

Որոշակի աշխատանք է կատարվել սնկային քայքայման բնագավառում: Ս. Վ. Ապրիկյանը զբաղվել է բալդրդանի ուսումնասիրությամբ և ներդրմամբ: Նա որոշակի աշխատանք է կատարել ռեսուրսագիտության և բնապահպանության բնագավառներում:

Հետաքրքիր ուսումնասիրություններ է կատարվել Զ. Ս. Վարդանյանի կող-

մից, որը տվել է հյուսիսային Հայաստանի հիմնական բուսական էկոհամակարգերի կենսաէկոլոգիական գնահատականը, որտեղ լուրջ ուշադրություն է դարձվել բնապահպանական խնդիրներին, անտառային համակեցությունների էրոզիային, պարզել է տեխնիկական գործոնների ազդեցությունը բույսերի վրա, կազմել աշխարհագրական տարբեր բնույթի քարտեզներ: Տվել է անտառային էկոհամակարգերի ընդհանուր բնութագիրը, անտառային տնկիների բույսերի ֆիզիոլոգիական գործընթացների փոփոխությունները:

Կանաչապատման խնդիրների լուծմամբ զբաղվել են Գյումրու պետական համալսարանի բուսաբանները, որոնք Գյումրու օրինակով ցույց են տվել կանաչապատման համար ծառերի, թփերի, խոտաբույսերի ընտրությունը, էտի ճիշտ կատարումը և այլն:

Այսպիսով, բուսաբանական գիտությունը Հայաստանում ձևավորվել է հին ժամանակներից, հանդիպում է բուսաբանական շատ գիտական խնդիրների, հետազոտությունների կենտրոն և տվել է աշխարհահռչակ բուսաբաններ, որոնք զբաղվել են բույսերի կարգաբանությամբ, էկոլոգիայի, հումքագիտության, պահպանման խնդիրներով:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Մինոնյան Ռ., Բուսաբանություն, բույսերի անատոմիա և մորֆոլոգիա (ուսումնական ձեռնարկ), Ե., 2015, 271 էջ:
2. Актуальные проблемы ботаники в Армении. Материалы международной конференции (6-9 октября 2008 г., Ереван), Е., 2008, с. 5-41.
3. Зироян А. Н., Григорян Арц. А., Семенное и вегетативное размножение некоторых травянистых многолетников флоры Армении. Бюлл. Бом сада АН Арм. ССР, 1988, 29, с. 92-103.
4. [https://hy.wikipedia.org/wiki/Լևոն\\_Հարությունյան\\_\(կենսաբան\)](https://hy.wikipedia.org/wiki/Լևոն_Հարությունյան_(կենսաբան))
5. [https://hy.wikipedia.org/wiki/Էլենոսրա\\_Գաբրիելյան](https://hy.wikipedia.org/wiki/Էլենոսրա_Գաբրիելյան)
6. [https://hy.wikipedia.org/wiki/Ժիրայր\\_Վարդանյան\\_\(բուսաբան\)](https://hy.wikipedia.org/wiki/Ժիրայր_Վարդանյան_(բուսաբան))
7. [https://hy.wikipedia.org/wiki/Լիա\\_Օսիպյան](https://hy.wikipedia.org/wiki/Լիա_Օսիպյան)